ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 20

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔ և ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ/անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայք/ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/7 ծածկագրով գնանշման հարցման

գ.Արմաշ «15» հունվարի 2018 թ.

« Ակադեմիկոս Ա.Պ.Հայրիյանի անվ.Արմաշի առողջության կոնտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Լևոն Հայրիյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Գնորդ**, մի կողմից և <<Մարինե Խաչատրյան >> ԱՁ - ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Խաչատրյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Վաճառող**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1402704.6(մեկ միլիոն չորս հարյուր երկու հազար յոթ հարյուր չորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[4]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[5]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[6]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[7]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝ ՎԱՃԱՌՈՂ՝

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ,
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ » ՓԲԸ Արարատի մասնաճյուղ
հ/հ 11500604222600
ՀՎՀՀ 04101356

Տնօրեն՝ Լևոն Հայրիյան

Կ.Տ.

Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,,
ՀՀ Արարատի մարզ գ, Արմաշ
,,ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ
Հ/Հ 16010020904000
ՀՎՀՀ 46440361

Տնօրեն՝ Մ. Խաչատրյան

Կ. Տ

Հավելված N 1
N20 <<ԱԱԿ ԳՀԱՊՁԲ 18/7 >> ծածկագրով
15.01.2018թ. կնքված գնանշման հարցման
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	33611100	օմեպրազոլ	Բելոռուս	20մգ; (30/3x10/) բլիստերում	դեղապատիճներ	17.1	4275	250	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	250	15.12.2018
2	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ)	Հունգարիա	150մգ; (30/3x10/) բլիստերում	դեղահատեր թաղանթապատ	122.5	3675	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
3	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	Հունգարիա	100մգ/մլ+2,5մգ/մլ; (5) ամպուլներ 1մլ	լուծույթ ներարկման	709.4	14188	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
4	33651112	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու	Սլովենիա	125մգ/5մլ+ 31,25մգ/5մլ, 25գ դեղափոշի ապակե շշիկում 100մլ դեղակախույթի համար և չափիչ գդալ	դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի	2009	40180	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018

		(կալիումի քլավուլանատ)									
5	33661121	ացետիլսալիցիլաթթու	Գերմանիա	100մգ; (20/2x10/) բլիստերում	դեղահատեր աղելույծ թաղանթապատ	74.8	8976	120	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	120	15.12.2018
6	33621520	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), հիդրոքլորոթիազիդ	ՈՒկրաինա	10մգ+25մգ; (20/1x20/) բլիստերում, (40/2x20/) բլիստերում, (30/1x30/) բլիստերում, (60/2x30/) բլիստերում	դեղահատեր	36.3	1089	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
7	33611170	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)	Հունգարիա	40մգ; (24/1x24/) բլիստերում, (60) պլաստիկե տարայում, (100) պլաստիկե տարայում	դեղահատեր	23.7	2370	100	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	100	15.12.2018
8	33674000	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ)	Ֆրանսիա	2մգ/մլ; 150մլ պլաստիկե շշիկ	օշարակ	3214.6	32146	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018
9	33651118	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)	Բելոռուս	500մգ; (1) ապակե սրվակ, (10) ապակե սրվակներ, (270) ապակե սրվակներ, (10/1x10/) ապակե սրվակներ բլիստրում	դեղափոշի ներարկման լուծույթի	281.1	28110	100	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	100	15.12.2018
10	33651112	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ)	Անգլիա	200մգ/5մլ+ 28,5մգ/5մլ, 70մլ ապակե շշիկ	դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի	2816.3	56326	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
11	33674000	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ	Ֆրանսիա	200մգ/5մլ+40մգ/5մլ; 100մլ շշիկ	դեղակախույթ	5092.7	50927	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018

12	33621510	կապտոպրիլ	Բելոռուս	25մգ; (20/2x10/) բլիստերում	դեղահատեր	5.2	260	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
14	33621520	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ)	Գերմանիա	20մգ; (30/3x10/) բլիստերում	դեղահատեր	85	42500	500	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	500	15.12.2018
15	33611360	կալցիում, վիտամին D3	Նորվեգիա	500մգ+200ՄՄ; (30) պլաստիկե տարայում, (60) պլաստիկե տարայում, (100) պլաստիկե տարայում	դեղահատեր թաղանթապատ	50.8	60960	1200	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	1200	15.12.2018
16	33611290	գլիմեպիրիդ	Իտալիա	4մգ; (30/2x15/) բլիստերում	դեղահատեր	339	186450	550	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	550	15.12.2018
17	33651116	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիումական աղ)	Կորեա	500մգ; (10) սրվակներ	դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	742.6	37130	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
18	33642230	L—ոթիրոքսին նատրիում	Գերմանիա	100մկգ; (50/2x25/) բլիստերում, (100/4x25/) բլիստերում	դեղահատեր	20.5	9225	450	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	450	15.12.2018
19	33621690	կարվեդիլոլ	ՀՀ	25մգ; (30/3x10/), բլիստերում	դեղահատեր	52.9	15870	300	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	300	15.12.2018
21	33611350	ասկորբինաթթու	ՀՀ	50մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ	լուծույթ ներարկման	34.1	1705	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
22	33691222	ցինարիզին	Բուլղարիա	25մգ; (50) բլիստերում	դեղահատեր	5	1200	240	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	240	15.12.2018

23	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	Բուլղարիա	15մգ/5մլ; 100մլ ապակե կամ պլաստիկե շշիկ — չափիչ գդալ	օշարակ	1440	50400	35	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	35	15.12.2018
24	33661163	դինատրիումական ադենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ	Վրաստան	10մգ+50մգ+0,5մգ+ 20մգ, ամպուլներ (3), 2մլ լուծիչ ամպուլներում (3)	դեղափոշի լիոֆիլացված, ներարկման լուծույթի	1973.5	39470	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
25	33691185	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ	Ավստրա	40մգ/մլ; (5) ամպուլներ 5մլ	լուծույթ ներարկման	1331	26620	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
26	33651110	ամպիցիլին (ամպիցիլին նատրիում)	Ուկրաինա	500մգ; (40) ապակե սրվակ	դեղափոշի ներարկման լուծույթի	173.7	5211	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
27	33691123	լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)	Հունգարիա	150մգ; (1) բլիստերում	դեղահատեր	893	17860	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
28	33631290	իբուպրոֆեն	ՀՀ	20մգ/մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ	դեղակախույթ ներքին ընդունման	1757.6	26364	15	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	15	15.12.2018
29	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	Գերմանիա	3մգ/մլ;100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ	օշարակ	2045	40900	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
30	33611440	վիտամին A , վիտամին D3, վիտամին B2,	Սլովենիա	900 ՄՄ/5մլ+100ՄՄ/5մլ+1մգ/5մլ+0,6մգ/5մլ+1մգ/5մլ+1մկգ/5մլ+50մգ/5մլ+5մգ	օշարակ	1929.3	38586	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018

		վիտամին B6, վիտամին B1, վիտամին B12, վիտամին C, վիտամին PP, D-պանթենոլ		/5մլ; 150մլ ապակե շշիկ — չափիչ գդալ							
31	33621210	երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր	Սլովենիա	50մգ/5մլ; 100մլ ապակե շշիկ	օշարակ	3213.6	32136	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018
32	33621310	տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ)	Ֆրանսիա	35մգ; (60/2x30/) բլիստերում	դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ	100.7	40280	400	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	400	15.12.2018
33	33621720	բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)	Գերմանիա	5մգ; (30/3x10/), (30/1x30/), (50/5x10/), (50/2x25/) և (90/3x30/) բլիստերում	դեղահատեր թաղանթապատ	70.48	28192	400	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	400	15.12.2018
34	33651131	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ	Լեհաստան	100մգ+20մգ; (20) բլիստերում	դեղահատեր	29.8	1192	40	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	40	15.12.2018
35	33621390	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ)	Հունգարիա	200մգ բլիստերում	դեղահատեր	117.6	35280	300	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	300	15.12.2018
36	33671113	սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ)	ՀՀ	2մգ; (24) բլիստերում	դեղահատեր	18.4	920	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
37	33631480	քոնդրոիտինի սուլֆատ, մելօքսիկամ	ՌԴ	50մգ/գ+10մգ/գ; 30գ ալյումինե պարկուճում	նրբաքսուք արտաքին կիրառման	4104.6	8209.2	2	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	2	15.12.2018
38	33631110	նիստատին	Բելոռուս	500000ՄՄ; (10/1x10/) բլիստերում,	դեղահատեր թաղանթապատ	19	1900	100	ՀՀ Արարա	100	15.12.2018

			ուս	(20/2x10/) բլիստերում					տի մարզ գ. Արմաշ		
39	33631300	կետոպրոֆեն	Գերմանիա	50մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ	նրբաքսուք արտաքին կիրառման	2400	4800	2	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	2	15.12.2018
40	33621700	մետոպրոլոլ (մետոպրոլոլի սուկցինատ)	Հունգարիա	25մգ; (30/3x10/) բլիստերում, (100/10x10/) բլիստերում	դեղահատեր երկարատև—ձերբազատմամբ թաղանթապատ	25	2500	100	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	100	15.12.2018
41	33651170	ացիկլովիր	Բելորուս	50մգ/գ; 10գ ալյումինե պարկուճ	քսուք	697.2	3486	5	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	5	15.12.2018
42	33671116	քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)	Շվեցարիա	0,5մգ/մլ; 10մլ պլաստիկե տարա	քթակաթիլներ	1864.3	5592.2	3	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	3	15.12.2018
43	33691186	պիրացետամ	Բելորուս	200մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ	լուծույթ մ/մ—ն/ե ներարկման	59.3333	1780	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
44	33621740	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	Ուկրաինա	10մգ; (28) բլիստերում	դեղահատեր	70.7	13433	190	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	190	15.12.2018
46	33691136	նատրիումի քլորիդ	ՀՀ	250մլ պլաստիկե փաթեթ	լուծույթ կաթիլաներարկման	403.3	4033	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018
47	33661000	պենտոքսիֆիլին	Հնդկաստան	400մգ; (20/2x10/) բլիստերում	դեղահատեր թաղանթապատ	148.8	7440	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
48	33691140	ացետիլցիստեին	Գերմանիա	600մգ; (10) պլաստիկե տարայում	դեղահատեր դյուրալույծ	259.3	12965	50	ՀՀ Արարատի մարզ գ.	50	15.12.2018

									Արմաշ		
49	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	Գերմանիա	30մգ/5մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ	լուծույթ ներքին ընդունման (ազնվամորու համով)	1825	54750	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
50	33611360	խոլեկալցիֆերոլ	Լեհաստան	15000ՄՄ/մլ; 10մլ ապակե շշիկ	կաթիլներ ներքին ընդունման	3113	108955	35	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	35	15.12.2018
51	33612000	սիմետիկոն	Գերմանիա	40մգ/մլ; 30մլ սրվակ-կաթոցիկ	կիթ ներքին ընդունման	2235	44700	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
52	33691213	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium)	Սլովենիա	1,2x10^7; (16), ապակե տարայում, (16/2x8/), բլիստերում	դեղապատիճներ կոշտ	164.3	32860	200	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	200	15.12.2018
53	33611150	պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ)	Գերմանիա	(3500ԱՄ+4200ԱՄ+250ԱՄ); (20/1x20/) բլիստերում, (40/2x20/) բլիստերում, (80/4x20/) բլիստերում, (100/5x20/) բլիստերում	դեղահատեր թաղանթապատ	43.3	4330	100	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	100	15.12.2018
54	33651128	նիտրոֆուրազոն, ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	ՀՀ	2մգ/գ+70մգ/գ+25մգ/գ; 5գ պլաստիկե շշիկ	ականջակաթիլներ	441	2205	5	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	5	15.12.2018
55	33651145	նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ),	Ֆրանսիա	1գ(650000 ԱՄ)/100մլ+1000000ԱՄ/100մլ+0.1գ/100մլ; 10.5մլ շշիկ-կաթոցիկ	ականջակաթիլներ (լուծույթ)	2496.8	7490.4	3	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	3	15.12.2018

		պոլիմիքսին Բ(պոլիմիքսին Բ սուլֆատ), դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիում մետասուլֆոբենզոատ)									
56	33612000	դիոսմեկտիտ	Ֆրանսիա	3գ; (10), (30) փաթեթիկներ 3.76գ	դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի նարնջի համով	210	4200	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
57	33611440	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), ցիանոկոբալամին, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	Գերմանիա	50մգ/մլ+50մգ/մլ+500մկգ/մլ+10մգ/մլ; (5) ամպուլներ 2մլ	լուծույթ մ/մ ներարկման	579	3474	6	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	6	15.12.2018
58	33671128	ադատոդա անոթային, մատուտակ հարթ, պղպեղ երկարավուն, մանուշակ բուրավետ, զոպա դեղատու, խոլնջան, ցորեն լայնատերև, տուղտ դեղատու, ունաբ իսկական,	Պակիստան	60մգ/մլ+7,5մգ/մլ+10մգ/մլ+2,5մգ/մլ+5մգ/մլ+5մգ/մլ+10մգ/մլ+10մգ/մլ+10մգ/մլ; 90մլ ապակե շշիկ,	օշարակ	1633.7	163337	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018

		իշնոտոտ տերևակից									
59	33611150	պանկրեատին (լիպազ 40000ԵՖՄ, ամիլազ 25000 ԵՖՄ, պրոտեազ 1600 ԵՖՄ)	Գերմանիա	400մգ; (20/2x10/), բլիստերում և (20) պլաստիկե տարայում	դեղապատիճներ աղելույծ	147.3	4419	30	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	30	15.12.2018
60	33641413	դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ)	Սլովենիա	4մգ/մլ; (5) ամպուլներ 1մլ	լուծույթ ներարկման	142.7	2854	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
61	33621740	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	Հունգարիա	5մգ; (30/3x10/), բլիստերում	դեղահատեր	68.8	6192	90	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	90	15.12.2018
62	33651116	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում)	Բելոռուս	1000մգ; (1) ապակե սրվակ, (10) ապակե սրվակ	դեղափոշի ներարկման լուծույթի	233.6	4672	20	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	20	15.12.2018
63	33611160	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ	Ֆինլանդիա	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ	3,5գ+2,5գ+2,9գ+10գ; (20) փաթեթիկներ 18,9գ	311.9	15595	50	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	50	15.12.2018
64	33661121	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ)	Կորեա	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ)	500մգ; (20/2x10/) բլիստերում	55.9	22360	400	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	400	15.12.2018
65	33631470	բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), կլոտրիմազոլ, գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ)	Բելգիա	0,5մգ/գ+10մգ/գ+1մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ	նրբաքսուք	3223.7	9671.1	3	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	3	15.12.2018

66	33651111	ամօքսիցիլին	Սերբիա	250մգ/5մլ; 40գ գրանուլներ 100մլ ապակե սրվակում և չափիչ գդալ 5մլ	գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի	1052.8	10528	10	ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ	10	15.12.2018

* Բժշկական սարքավորումների և գործիքների պիտանելիության ժամկետները գնորդին հանձման պահին պետք է լինեն.

ա.2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող Բժշկական սարքավորումների և գործիքների պետք է ունենան առնվազը 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ.

բ. Մինչև 2,5 տարվա պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքը պետք է ունենան առնվազը 2/3-րդ մնացորդային պիտանելիության ժամկետ.

գ. Առանձին դեպքերում, ապրանքը սպառման համար սահմանված պիտանելիության կարճ ժամկետները՝ ապրանքը պետք է ունենան առնվազը 1/2-րդ մնացորդային պիտանելիության ժամկետ.

Դեղորայքի տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին, ներկայացման պահին կամ առնվազը 2(երկու) օրվա ընթացքում , համաձայն պայմանագրի

Այլ պարտադիր պայմաններ

Չափաբաժինների քանակներում փոփոխությունները, կապված պահանջարկի անկանխատեսելի պայմաններից, կկատարվի կողմերի փոխհամաձայնությամբ պայմանագրի գումարի սահմաններում , 15%-ի չափով համաձայն ՀՀ կառավարության 04.05.17թ.N526Ն որոշման 56 կետի 3-րդ ենթակետի,:

ԳՆՈՐԴ՝

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի
առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ,
«ՀԱՅԲԻԶՆԵՄԲԱՆԿ » ՓԲԸ
Արարատի մասնաճյուղ
հ/հ 11500604222600
ՀՎՀՀ 04101356

Տնօրեն՝ Լևոն Հայրիյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,,
ՀՀ Արարատի մարզ գ, Արմաշ
,,ՎՏԲ Հայաստան բանկ,,
Արտաշատի մ/ճ ՓԲԸ
Հ/Հ 16010020904000
ՀՎՀՀ 46440361

Տնօրեն՝ Մ. Խաչատրյան
Կ. Տ

Հավելված 2

15.01.2018թ. կնքված
N 20 ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/7ծածկագրով
գնման պայմանագրի

Ա/Հ ,,Մարինե Խաչատրյան,,

Վճարման ժամանակացույց

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
			140270.5	280541	420811.5	561082	631217.25	701352.5	771487.75	841623	981893.5	1122164	1262434.5	1402705	1402705
1	33611100	օմեպրազոլ	427.5	855.0	1282.5	1710.0	1923.8	2137.5	2351.3	2565.0	2992.5	3420.0	3847.5	4275.0	4275.0
2	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ)	368	735	1102.5	1470.0	1653.8	1837.5	2021.3	2205.0	2572.5	2940.0	3307.5	3675.0	3675.0
3	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	1419	2838	4256.4	5675.2	6384.6	7094.0	7803.4	8512.8	9931.6	11350.4	12769.2	14188.0	14188.0
4	33651112	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ)	4018	8036	12054.0	16072.0	18081.0	20090.0	22099.0	24108.0	28126.0	32144.0	36162.0	40180.0	40180.0
5	33661121	ացետիլսալիցիլաթթու	898	1795	2692.8	3590.4	4039.2	4488.0	4936.8	5385.6	6283.2	7180.8	8078.4	8976.0	8976.0
6	33621520	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), հիդրոքլորոթիազիդ	109	218	326.7	435.6	490.1	544.5	599.0	653.4	762.3	871.2	980.1	1089.0	1089.0

7	33611170	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)	237	474	711.0	948.0	1066.5	1185.0	1303.5	1422.0	1659.0	1896.0	2133.0	2370.0	2370.0
8	33674000	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ)	3215	6429	9643.8	12858.4	14465.7	16073.0	17680.3	19287.6	22502.2	25716.8	28931.4	32146.0	32146.0
9	33651118	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)	2811	5622	8433.0	11244.0	12649.5	14055.0	15460.5	16866.0	19677.0	22488.0	25299.0	28110.0	28110.0
10	33651112	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ)	5633	11265	16897.8	22530.4	25346.7	28163.0	30979.3	33795.6	39428.2	45060.8	50693.4	56326.0	56326.0
11	33674000	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ	5093	10185	15278.1	20370.8	22917.2	25463.5	28009.9	30556.2	35648.9	40741.6	45834.3	50927.0	50927.0
12	33621510	կապտոպրիլ	26	52	78.0	104.0	117.0	130.0	143.0	156.0	182.0	208.0	234.0	260.0	260.0
14	33621520	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ)	4250	8500	12750.0	17000.0	19125.0	21250.0	23375.0	25500.0	29750.0	34000.0	38250.0	42500.0	42500.0
15	33611360	կալցիում, վիտամին D3	6096	12192	18288.0	24384.0	27432.0	30480.0	33528.0	36576.0	42672.0	48768.0	54864.0	60960.0	60960.0
16	33611290	գլիմեպիրիդ	18645	37290	55935.0	74580.0	83902.5	93225.0	102547.5	111870.0	130515.0	149160.0	167805.0	186450.0	186450.0
17	33651116	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիումական աղ)	3713	7426	11139.0	14852.0	16708.5	18565.0	20421.5	22278.0	25991.0	29704.0	33417.0	37130.0	37130.0
18	33642230	L—ոթիրոքսին նատրիում	923	1845	2767.5	3690.0	4151.3	4612.5	5073.8	5535.0	6457.5	7380.0	8302.5	9225.0	9225.0
19	33621690	կարվեդիլոլ	1587	3174	4761.0	6348.0	7141.5	7935.0	8728.5	9522.0	11109.0	12696.0	14283.0	15870.0	15870.0
21	33611350	ասկորբինաթթու	171	341	511.5	682.0	767.3	852.5	937.8	1023.0	1193.5	1364.0	1534.5	1705.0	1705.0
22	33691222	ցինարիզին	120	240	360.0	480.0	540.0	600.0	660.0	720.0	840.0	960.0	1080.0	1200.0	1200.0
23	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	5040	10080	15120.0	20160.0	22680.0	25200.0	27720.0	30240.0	35280.0	40320.0	45360.0	50400.0	50400.0

24	33661163	դինատրիումական ադենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ	3947	7894	11841.0	15788.0	17761.5	19735.0	21708.5	23682.0	27629.0	31576.0	35523.0	39470.0	39470.0
25	33691185	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ	2662	5324	7986.0	10648.0	11979.0	13310.0	14641.0	15972.0	18634.0	21296.0	23958.0	26620.0	26620.0
26	33651110	ամպիցիլին (ամպիցիլին նատրիում)	521	1042	1563.3	2084.4	2345.0	2605.5	2866.1	3126.6	3647.7	4168.8	4689.9	5211.0	5211.0
27	33691123	լևամիզոլ (լևամիզոլի հիդրոքլորիդ)	1786	3572	5358.0	7144.0	8037.0	8930.0	9823.0	10716.0	12502.0	14288.0	16074.0	17860.0	17860.0
28	33631290	իբուպրոֆեն	2636	5273	7909.2	10545.6	11863.8	13182.0	14500.2	15818.4	18454.8	21091.2	23727.6	26364.0	26364.0
29	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	4090	8180	12270.0	16360.0	18405.0	20450.0	22495.0	24540.0	28630.0	32720.0	36810.0	40900.0	40900.0
30	33611440	վիտամին A , վիտամին D3, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B1, վիտամին B12, վիտամին C, վիտամին PP, D-պանթենոլ	3859	7717	11575.8	15434.4	17363.7	19293.0	21222.3	23151.6	27010.2	30868.8	34727.4	38586.0	38586.0
31	33621210	երկաթի (III) հիդրոքսիդի և պոլիմալտոզի համալիր	3214	6427	9640.8	12854.4	14461.2	16068.0	17674.8	19281.6	22495.2	25708.8	28922.4	32136.0	32136.0
32	33621310	տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ)	4028	8056	12084.0	16112.0	18126.0	20140.0	22154.0	24168.0	28196.0	32224.0	36252.0	40280.0	40280.0
33	33621720	բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)	2819	5638	8457.6	11276.8	12686.4	14096.0	15505.6	16915.2	19734.4	22553.6	25372.8	28192.0	28192.0

34	33651131	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ	119	238	357.6	476.8	536.4	596.0	655.6	715.2	834.4	953.6	1072.8	1192.0	1192.0
35	33621390	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ)	3528	7056	10584.0	14112.0	15876.0	17640.0	19404.0	21168.0	24696.0	28224.0	31752.0	35280.0	35280.0
36	33671113	սալբուտամոլ (սալբուտամոլի սուլֆատ)	92	184	276.0	368.0	414.0	460.0	506.0	552.0	644.0	736.0	828.0	920.0	920.0
37	33631480	քոնդրոիտինի սուլֆատ, մելօքսիկամ	821	1642	2462.8	3283.7	3694.1	4104.6	4515.1	4925.5	5746.4	6567.4	7388.3	8209.2	8209.2
38	33631110	նիստատին	190	380	570.0	760.0	855.0	950.0	1045.0	1140.0	1330.0	1520.0	1710.0	1900.0	1900.0
39	33631300	կետոպրոֆեն	480	960	1440.0	1920.0	2160.0	2400.0	2640.0	2880.0	3360.0	3840.0	4320.0	4800.0	4800.0
40	33621700	մետոպրոլոլ (մետոպրոլոլի սուկցինատ)	250	500	750.0	1000.0	1125.0	1250.0	1375.0	1500.0	1750.0	2000.0	2250.0	2500.0	2500.0
41	33651170	ացիկլովիր	349	697	1045.8	1394.4	1568.7	1743.0	1917.3	2091.6	2440.2	2788.8	3137.4	3486.0	3486.0
42	33671116	քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)	559	1119	1677.9	2237.2	2516.8	2796.5	3076.1	3355.7	3915.0	4474.3	5033.6	5592.9	5592.9
43	33691186	պիրացետամ	178	356	534.0	712.0	801.0	890.0	979.0	1068.0	1246.0	1424.0	1602.0	1780.0	1780.0
44	33621740	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	1343	2687	4029.9	5373.2	6044.9	6716.5	7388.2	8059.8	9403.1	10746.4	12089.7	13433.0	13433.0
46	33691136	նատրիումի քլորիդ	403	807	1209.9	1613.2	1814.9	2016.5	2218.2	2419.8	2823.1	3226.4	3629.7	4033.0	4033.0
47	33661000	պենտոքսիֆիլին	744	1488	2232.0	2976.0	3348.0	3720.0	4092.0	4464.0	5208.0	5952.0	6696.0	7440.0	7440.0
48	33691140	ացետիլցիստեին	1297	2593	3889.5	5186.0	5834.3	6482.5	7130.8	7779.0	9075.5	10372.0	11668.5	12965.0	12965.0
49	33671125	ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)	5475	10950	16425.0	21900.0	24637.5	27375.0	30112.5	32850.0	38325.0	43800.0	49275.0	54750.0	54750.0
50	33611360	խոլեկալցիֆերոլ	10896	21791	32686.5	43582.0	49029.8	54477.5	59925.3	65373.0	76268.5	87164.0	98059.5	108955.0	108955.0
51	33612000	սիմետիկոն	4470	8940	13410.0	17880.0	20115.0	22350.0	24585.0	26820.0	31290.0	35760.0	40230.0	44700.0	44700.0

52	33691213	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium)	3286	6572	9858.0	13144.0	14787.0	16430.0	18073.0	19716.0	23002.0	26288.0	29574.0	32860.0	32860.0
53	33611150	պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ)	433	866	1299.0	1732.0	1948.5	2165.0	2381.5	2598.0	3031.0	3464.0	3897.0	4330.0	4330.0
54	33651128	նիտրոֆուրազոն, ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)	221	441	661.5	882.0	992.3	1102.5	1212.8	1323.0	1543.5	1764.0	1984.5	2205.0	2205.0
55	33651145	նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), պոլիմիքսին Բ(պոլիմիքսին Բ սուլֆատ), դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիում մետասուլֆոբենզոատ)	749	1498	2247.1	2996.2	3370.7	3745.2	4119.7	4494.2	5243.3	5992.3	6741.4	7490.4	7490.4
56	33612000	դիոսմեկտիտ	420	840	1260.0	1680.0	1890.0	2100.0	2310.0	2520.0	2940.0	3360.0	3780.0	4200.0	4200.0
57	33611440	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), ցիանոկոբալամին, լիդոկային (Ոլիդոկայինի հիդրոքլորիդ)	347	695	1042.2	1389.6	1563.3	1737.0	1910.7	2084.4	2431.8	2779.2	3126.6	3474.0	3474.0

58	33671128	աղատոդա անոթային, մատուտակ հարթ, պղպեղ երկարավուն, մանուշակ բուրավետ, զոպա դեղատու, խոլնջան, ցորեն լայնատերև, տուղտ դեղատու, ունաբ իսկական, իշնոտոտ տերևակից	1634	3267	4901.1	6534.8	7351.7	8168.5	8985.4	9802.2	11435.9	13069.6	14703.3	16337.0	16337.0
59	33611150	պանկրեատին (լիպազ 40000ԵՖՄ, ամիլազ 25000 ԵՖՄ, պրոտեազ 1600 ԵՖՄ)	442	884	1325.7	1767.6	1988.6	2209.5	2430.5	2651.4	3093.3	3535.2	3977.1	4419.0	4419.0
60	33641413	դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ)	285	571	856.2	1141.6	1284.3	1427.0	1569.7	1712.4	1997.8	2283.2	2568.6	2854.0	2854.0
61	33621740	ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	619	1238	1857.6	2476.8	2786.4	3096.0	3405.6	3715.2	4334.4	4953.6	5572.8	6192.0	6192.0
62	33651116	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում)	467	934	1401.6	1868.8	2102.4	2336.0	2569.6	2803.2	3270.4	3737.6	4204.8	4672.0	4672.0
63	33611160	նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ	1560	3119	4678.5	6238.0	7017.8	7797.5	8577.3	9357.0	10916.5	12476.0	14035.5	15595.0	15595.0
64	33661121	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ)	2236	4472	6708.0	8944.0	10062.0	11180.0	12298.0	13416.0	15652.0	17888.0	20124.0	22360.0	22360.0

65	33631470	բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), կլոտրիմազոլ, գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ)	967	1934	2901.3	3868.4	4352.0	4835.6	5319.1	5802.7	6769.8	7736.9	8704.0	9671.1	9671.1
66	33651111	ամօքսիցիլին	1053	2106	3158.4	4211.2	4737.6	5264.0	5790.4	6316.8	7369.6	8422.4	9475.2	10528.0	10528.0
ԴԵՂՈՐԱՅՔ և			10%	20%	30%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	90%	100%	100%

Գնորդ՝
,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ի
ՀՀ Արարատի մարզ, գ. Արմաշ
,,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ,, ՓԲԸ Արարատի մ/ճ

Հ/Հ 11500604222600
ՀՎՀՀ 04101356
Տնօրեն.....Լ. Հայրիյան

Կ.Տ.

Վաճառող՝
Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,,
ՀՀ Արարատի մարզ գ, Արմաշ
,,ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ
Արտաշատի մ/ճ

Հ/Հ 16010020904000
ՀՎՀՀ 46440361
Տնօրեն՝ *Մ. Խաչատրյան*

Հավելված 11
ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/7 *ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

գ. Արմաշ « 15 » հունվար 2018 թ.

Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,, *ի դեմս Ընկերության տնօրեն* Մ. Խաչատրյան
որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է *,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/7 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,,
ՀՀ Արարատի մարզ գ, Արմաշ
,,ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ
Հ/Հ 16010020904000
ՀՎՀՀ 46440361

Տնօրեն՝ Մ. Խաչատրյան

Կ. Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ " " . 20...թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Ա/Ձ ,,Մարինե Խաչատրյան,,

4. Վճարողի բանկը՝ ,,ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 16010020904000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 46440361

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ << Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն >> ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 04101356

10.Շահառուի բանկը՝ <ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ> ՓԲԸ

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 11500604222600

12.Գումարը թվերով և բառերով՝ 140000 հարյուր քառասուն հազար

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում՝ տուժանքի ձևով

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/7

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔ և ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ /անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող / ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N 20 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

գ.Արմաշ 16.01.2018թ.

« Ակադեմիկոս Ա.Պ.Հայրիյանի անվ.Արմաշի առողջության կոնտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Լևոն Հայրիյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մի կողմից և <<Մարինե Խաչատրյան>>Ա/Ձ ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 15.01.2018թ. կնքված N20 ,ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/7 պայմանագրի 8.15 կետը կնքեցին սույն համաձայնագիր հետևյալ մասին.

Համաձայնագրի առարկան

1.1 Հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2018թ. հունվարի 15-ին կնքված N 20 **<<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/7>>** պայմանագրի մասով հաստատել գնման ժամանակացույցը ըստ Հավելված 1-ի և վճարման ժամանակացույց ըստ հավելված N2-ի, որոնց միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշվող ապրանքատեսակների և դրանց քանակների ձեռք բերման համար.

1.2 Սույն համաձայնագիրը համարվում է **<<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/7>>N 20** գնման պայմանագրի անբաժանելի մաս:

1.3 Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, որից երկու էջերը հավելված N1 և հավելված N2 , հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

1.5 Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<< Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն>>ՓԲԸ ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ Փ. Մ. Նիկողոսյան 12 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Արարատի մ/ճ Հ/Հ 11500604222600 ՀՎՀՀ 04101356	<<Մարինե Խաչատրյան>>Ա/Ձ ՀՀ Արարարտի մարզ գԱրմաշ ,,ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ Հ/Հ 16010020904000 ՀՎՀՀ 46440361
Տնօրեն՝ Լ. Հայրիյան	Տնօրեն՝ Մ. Խաչատրյան